

Տեղեկանք

«Տավուշի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից 2013 թ.-ի տարեկան ծրագրով կատարած աշխատանքների վերաբերյալ

Ներքին աուդիտի բաժինը 2013թ-ի ընթացքում աուդիտ է իրականացրել «Տավուշի մարզպետարանի ենթակայության թվով 19 բժշկական և 3 կրթական կազմակերպություններում: Նշված ՓԲԸ-ներում և ՊՈԱԿ-ներում ներքին աուդիտի ստանդարտների համաձայն, իրականացվել է ֆինանսական և համապատասխանության աուդիտներ:

Ծրագրային 23 աուդիտից իրականացվել է 21-ը: «Այգեձորի ԱԿ» և «Արծվաբերդի ԱԿ» ՓԲԸ-ների աուդիտները տեղափոխվել են 2014 թվական: Իրականացված ուսումնասիրությունների ընթացքում խարդախության, կաշառակերության, չարաշահումների և վատնումների դեպքեր չեն արձանագրվել:

Հրավիրվել է մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի չորս նիստ և քննարկվել աուդիտի հաշվետվությունները: ՓԲԸ-ների և ՊՈԱԿ-ների տնօրեններին տրվել են համապատասխան հանձնարարականներ արձանագրված խախտումների և թերությունների վերացման նպատակով:

Մարզպետարանի ենթակայության գործող կազմակերպություններում առկա են որոշ կրկնվող թերություններ.

- սխալ են ձևակերպվել կազմակերպությունների տարեկան եկամուտները և ծախսերը (հարկեր և տույրեր ծախսային հոդվածի մեջ են ներառվել փոխանցված շահութահարկի և շահաբաժնի գումարները, դեղորայքի և բենզինի ձեռքբերումները ամբողջությամբ ծախսագրվել են առանց հաշվի առնելու տարեվերջյան մնացորդները, պետության կողմից անհատույց տրված դեղորայքը տարեկան ֆինանսական հաշվետվություններում չեն արտացոլվել)
- բժշկական կազմակերպությունները տարվա ընթացքում կատարել են շրջանառության մեկ տոկոսի չափով շահութահարկի կանխավճարներ (համաձայն 14.04.2004 թվականի «Վարչության N 549-Ն որոշման

առողջապահական կազմակերպությունները ազատված են նվազագույն
շահութահարկի հաշվարկից)

- ապրանքների և ծառայությունների ձեռքբերումները իրականացվել են
<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջների խախտումներով :

Ներքին աուդիտի բաժնի պետ  Ն.Մելքումյան